

ԾՐԱԳԻՐ

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ընդերքի վարչության փորձագետի կողմից իրականացվող աշխատանքների

Փորձագետ ներգրավելու դեպքը և հիմնավորումները

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ընդերքի վարչության (այսուհետ՝ Վարչություն) կանոնադրական խնդիրներից բխող երկրաբանական տեղեկատվության արժանահավատության գնահատման, մետաղական օգտակար հանածոների հանքավայրերի երկրաբանատնտեսագիտական գնահատման և վերագնահատման նյութերի փորձաքննության իրականացման և համապատասխան կոնիցիաների պարամետրերի հաստատման վերաբերյալ առաջարկությունների ներկայացման գործառույթների իրականացման ծավալների կտրուկ ավելացման նպատակով պետական ընդերքաբանական փորձաքննության (այսուհետ՝ Փորձաքննություն) գործընթացին ներգրավվում է փորձագետ:

Փորձագետը ներգրավվում է փորձաքննվող նյութերն ամբողջությամբ կամ դրանց առանձին մասերը գնահատելու, մասնագիտական կարծիք տալու նպատակով՝ ստորև բերվող հարցերի վերաբերյալ.

1. օգտակար հանածոյի որակատեսիսնոլոգիական հատկությունների,
2. հանքավայրի շահագործման նախատեսվող եղանակի, բացման սխեմայի և մշակման համակարգի,
3. հանքավայրի շահագործման բնական պայմանների (հիդրո-, լեռնա-, ինժեներաերկրաբանական, լեռնատեխնիկական, բնապահպանական և այլն) ,
4. օգտակար հանածոյի վերամշակման տեխնոլոգիական սխեմայի,
5. հանքավայրի շահագործման տեխնիկատնտեսական ցուցանիշների հիմնավորվածության,
6. կոնիցիաների պարամետրերի կազմի ու չափաքանակների հիմնավորվածության:

Աշխատանքների իրականացման ժամանակահատվածը

Մինչև մեկ տարի ժամկետով:

Ակնկալվող արդյունքները

Փորձագետը իրականացված աշխատանքների վերաբերյալ կազմում է մասնագիտական կարծիք:

Հաշվեքվություններ ներկայացնելու ժամկետները

Փորձագետը, մասնագիտական կարծիք կազմելուց հետո, տասնօրյա ժամկետում ներկայացնում է իր կողմից իրականացված աշխատանքների վերաբերյալ հաշվետվություն:

Աշխատանքների գնահատման չափանիշները

Փորձագետի կողմից իրականացված աշխատանքների գնահատումը իրականացվում է Հայաստանի Հանրապետության կառավարություն 2013 թվականի մարտի 14-ի «Պինդ օգտակար հանածոների հանքավայրերի պաշարների և կանխատեսումային պաշարների դասակարգումը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 1998 թվականի փետրվարի 9-ի N 80 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 274-Ն որոշման համաձայն:

Աշխատանքների գնահատման արդյունքների ամփոփման ժամկետները

Յուրաքանչյուր իրականացված աշխատանքի գնահատման արդյունքներն ամփոփվում են տասնօրյա ժամկետում:

Աշխատանքները կատարելու համար փորձագետին ներկայացվող պահանջները

- 072401.00.7. Լեռնային գործ և օգտակար հանածոների արդյունահանում (մագիստրոս) մասնագիտությամբ բարձրագույն կրթություն,
- առնվազն երեք տարվա մասնագիտական փորձ,
- հեղինակ կամ համահեղինակ է նվազագույնը երեք մետաղական հանքավայրերի՝ կոնդիցիանների պարամետրերի հիմնավորման կամ պաշարների հաշվարկման նյութերի,
- տիրապետում է ռուսերենին (ազատ),
- ունի համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն: